

թող եշխանին, և յիմարաբար քեզ չթողնես: և ի դուք հոգիդ քեզ չկորցնես:

Եւ ի՞նչ գուրս եկաւ. դէմ, այժմ նստիր ու միշտ դու ողաքա, ինչ որ յետ ըերել չես կառող արդէն:

Բայց ումն ես ասում: Դէ, հիմի նստիր ու ու բախտգլաց: որ էլ իսկի դառնալու չէ:

Ա. Մ.



## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԹՈՒԹԻՒՆ.

### ՄԵԾ ԵՂՋԻՒՐԱԿՈՐ Ա.ՆԱՍՈՒՆՆԵՐԸ

**ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ.**—Առվել յղութիւնը տեսում է սովորաբար 240—  
321 օր, մեծաւ մասամբ 285 օր, այսինքն 9 ամիս 15 օրից  
աւելի: Յղացած երինջի կամ կովի ստինքը յղութեան երկրորդ  
կեսից յետոյ, երբ սովորաբար հորթը սկսում է շարժուել ար-  
դանդում, սկսում է զարդանալ: Յղի կովին պէտք է շատ լաւ և  
զգուշութեամբ խնամել, նորան պէտք է հեռու պահել ամբին  
անահակ հարուածներեց, խմելուց, չպէտք է վաղեցնել, աշխա-  
տեցնել: Լաւ կլինի յղի կովերին պահել առանձին ախտոներում,  
որտեղ ներս ու գուրս անելը պէտք է շատ զգուշութեամբ կա-  
տարուի՝ միաժամանակ միենոյն դռնից երկու անառուն (մէկը  
յղի) չպէտք է անցիենան: Հովիւր պարտաւոր է ուշք գարճնել, որ  
նախը մէջ յղի կովերը չկուռւեն և եղջիւրներով կամ ոտներով  
երար չհարուածեն: Լաւ կլինի գարնանը, երբ սովորաբար նախ-  
ը մէջ շատ կովեր են յղի լինում, հովիւների թիւր աւելացնել:  
Խիստ ծանրացած յղի կովերի համար վատնգաւոր է, երբ ստա-  
մոքաը արագութեամբ սառչում է, որովհետեւ կարող են վիժել.  
ուստի պէտք է զգուշանալ այդպիսներին ձմեռը շատ սառն ջուր  
խմացնելուց, մանաւանդ գուրսը և շատ սառն կամ եղեամով  
ծածկուած կեր ուտացնելուց:

Օրպակաս ծնունդը և վիժումը երբեմն տեղի է ունենում ժամանակից 3—5 շաբաթ առաջ. այդպիսի հորթը դեռ կարող է ապրել, բայց սովորաբար կովերի վիժումը տեղի է ունենում յոյութեան 5—7 ամիսներում: Վիժումը լինում է անհատական և տարափոխիկ: Անհատական վիժունքի պատճառները, ինչպէս վերևն յիշեցինք, անզգոյշ հարուածելն, չափազանց կեր դործ ածելն և մի քանի ներքին հիւանդութիւններն են: Եթէ վիժումը պատճառական բնաւորութիւնն ունի, այդ ոչինչ, թէպէտ մի անգամ վիժող կովը ընդունակ է դառնում ուրիշ անգամ ևս նոյնը կըկնելու: Տարափոխիկ կամ իտիփոխական վիժմունքի պատճառը վարակիչ մի նիւթ է, որից ազատ պահելու համար անհրաժեշտ է անմիջապէս բռլոր գեռ չվիժող անառուններին մի նոր բնակարան տեղափոխել, նոր մշակ վարձել և թէ բնակարանը, թէ կենդանիներին պէտք է լաւ ախտահանել կարօլի թթուի  $20/0$  լուծուածքով: Աւելի օգտակար է ախտահանել ախոռի թէ պատերը, թէ յատակը, թէ առաստաղը և թէ այնա տեղ դանուող բռլոր իրերը՝ նաև կալաքարով (պելօք) և ապա սուլեմի (սւեմա) կամ կարբօլի թթուի լուծուածքով:

Յղի կովերին պէտք է լաւ և առատ կերակրել, երբէք չկերցնել մգլուտած, փչացած խոտ, փչացած կամ սառած արմատապառող, հում կարտոֆիլ, վերան եղեամն իջած կանաչ խոտ ևայլն: Քանի որ կովը զգալի կերպով չէ պակասեցնում իւր կաթը, կերի  $\frac{1}{3}$  կամ  $\frac{1}{2}$  մասը պէտք է լաւ խոտ լինի, վերան աւելացրած զօրեղ կեր (թեփ, կուլտոն և այլն) և արմատապառող:

Սովորաբար յղի կովերի կթելը կարելի է շարունակել մինչև ծնելուց 4—6 շաբաթ առաջ: Քանի որ կաթը պակասում է, զօրեղ կերի, երբեմն նոյն խոկ արմատապառողի քանակն ևս պէտք է պակասեցնել: Ծնելուց առաջ կովի կերի մեծ մասը և կամ ամբողջ կերը պէտք է բաղկացած լինի լաւ խոտից: Ծնելու մօտ օրերին կովերին առատ կերպով զօրեղ կեր տալով՝ գերացնելը վնասակար է, որովհետեւ ծնելուց յետոյ ստինքի բորբոքում կարող է յառաջանալ:

Ծնելու մօտ օրերին կովը կարելի է թողնել միւս կենդանիների մօտ ընդհանութ ախտուում, եթէ միայն ախտութ բաւական տաք է և միւս անառունները կապուած և ազատ ու արձակ տեղաւորուած են. հակառակ զէպքում պէտք է պահել առանձին ախտուում կամ մի ուրիշ յարմարաւոր բնակարամնում:

Ծնելուց յետոյ պէտք է կովերի մարմինը տրոքել մահուղի կտորով կամ մի փունջ ծղոտով և յետոյ տալ ալիւրից կամ թե-

մից պատրաստած լափ, միայն պէտք է աշխատել առքացնող կեր չտալ, որից հորթը կարող է վորկապութիւն ստանալ: Չափաղանց օդտակար է ճանաչուած այսպիսի ժամանակ լաւ արօտատեղի հանելլը. կերը երբէք չպէտք է շուտ շուտ վորխել, այդ շատ վնասակար է:

**Հորթերին խնամելը.**—Ծնելուց անմիջապէս յետոյ հորթի դունչը պէտք է մաքրել և մի քանի ժամ թողնել մօր մօտ, որ լիզելով չորացնէ իւր հորթուկին: Եթէ մայրը չկամենայ լիզել և չորացնել, պէտք է նորան ստիպմամբ անել տալ, սորա համար հորթի վերայ հարկաւոր է ցանել ալիւր, թեփ և կամ քիչ աղ, աղը շատ չպէտք է լինի, ապա թէ ոչ կսառեցնէ հորթի մարմինը և նա կարող է մրտել: Եթէ այս բոլոր յիշուած միջոցները չօգնեն և մայրը չը մօտենայ, իւր ձագին, մ'նում է որ տէրն ինքը մորթու վերայ ալիւր, թեփ կամազ ցանել և շորի կտորով կամ չոր ծղոտով շփէ ու շորացնէ և յետոյ մի տաք բնակարան՝ հորթանոց կամ խրճիթ, տանէ և դնէ յարդից պատրաստած փափուկ անկողնի վերայ: Հորթերին կաթով կերակրելու երկու եղանակ կայ, ա) բնական, երբ հորթը ուղղակի ծծում է մօրը. այս դէպքում կամ ամբողջ ժամանակը պէտք է մօր մօտ լինի և կամ՝ պահելով մի առանձին բնակարանում, օրական 3—4 անգամ մօտը թողնուի. բ) արհեստական, երբ ծնելուց յետոյ անմիջապէս հեռացնում են մօրեց և միայն սկզբն օրերում կերակրում են մի առանձին գործիքով, որ ունենում է գուտապելչից պառկէ: Այժմ շատ տեղերում այդպէս առանձնացած են պահում հորթերին մինչև մեծանալը: Առանձնացնելու պատճառն այն է, որ եթէ հորթերին անարգել մայրերի տակ թողնենք մինչև վերջը ծծելու նցանց կաթը, այդ կարող է վնասել նոցա մարմնի ապագայ զարդացմանը: Սակաւ կաթ ունեցող կովերի հորթերը քաղցած կմնան, ընդհակառակը կաթնառատ կովերինը՝ չափից աւելի կաթ ծծելով, կոկսեն շատ գերանալ և հեշտութեամբ ստամոքսի խանգարումն կստանան:

Ծնելուց մի քանի ժամ յետոյ միայն, երբ նորածին հորթը ոտքեր է կանգնում, պէտք է խմացնել անպատճառ մօր առաջին կաթից (գալից) և ապա այդպէս 8—10 օր շարունակ պէտք է տալ միմիայն մօր կաթը, ոկզքներում մասնաւոր խնամքով և ապա այդ նպատակով պատրաստած առանձին ամանից (շայկա): Նատ աեղերում մօր կաթը գործ են ածում եփած: Խոկապէս երբէք չպէտք է զրկել հորթին մօր սկզբնական կաթից՝ դալից, որովհետեւ այդ կաթը շատ օդտակար է և մաքրում, կանոնա-

ւորում է հորթի ստամոքսը։ Միայն կարեոր է առաջին ծնելովերի մօտ թողնել իւրեանց հորթերին։ այդպիսի կովերը սովորաբար սակաւ կաթ են տալիս։ նոցա ծծելը նպաստում է կաթի արտագրուելուն։ 3—4 ժամից յետոյ հորթը քաղց կզգայ և կսկսի մայր կանչել։ Սկզբներում մշտապէս իւրեանց մօր կուրծը ծծելով, հորթերն այդպիսով զարգացնում են նորաստինը։ Ամանք նոյն իսկ այս դէպքում մօր ծծեցնելն ուղղակի անօդուտ կամ վնասակար են համարում, և գերադասում են վերև յիշած արհեստական եղանակով մնուցանելը։ Այդ եղանակով հորթեր մեծացնելու պակասութիւնն այն է, որ գժուար կլինի հորթի համար նշանակել կաթի մի այնպիսի չափ, ինչպիսին այդպահանջում է նորա մարմնի զարգացումը։ Լաւ կաթնոտ կովը մկղբներում այնքան կաթ է տալիս, որ նոյն իսկ 2—3 հորթի կարող է բաւականութիւն տալ։ Եթէ թողնենք հորթին կովը մօտ մի որոշ ժամանակ, գժուար կլինի հաւատալ, թէ նա իւր չափն ստացաւ, որովհետեւ հորթն ամէն անդամ մի և նոյն եռանդով չի ծծի մօր կաթը, և բացի դրանից առաջին անդամ ծծած կաթը աւելի ջրալի է լինում։ Այս եղանակով հորթերին կերակրելու մի անյարմարութիւնն էլ այն է, որ շատ հոգս և խնամք է պահանջում։ Եթէ նախ կլինենք կովի կաթի մի մասը (ինչպէս այդ անում են շատ տեղերում), իսկ մնացածը թողնենք հորթին ծծելու, կարող է փորլուծութիւն յառաջանալ, որովհետեւ մնացած կաթը չափազանց իւղոտ է լինում։ ապա այն կովը, որի մօտ ժամանակ առ ժամանակ թողնում են հորթը, երբեմն խիստ յամառութեամբ պահում է կաթը և ոչ մի կերպ՝ ոչ շիելով, ոչ փայփայելով և ոչ սեղմումներով և այլ միջոցներով հնարաւոր է լինում կաթ ստանալ։ այսպիսի դէպքում տանտիկներ ստիպուած է միաժամանակ և' կթել, և' հորթին ծծեցնել։ իսկ այդ շատ անյարմար է, որովհետեւ ամէն ժամանակ գժուար է կովիկիթը պաշտպանել հորթի յարձակմունքներից, կաթը կլեղտուածուի, կթողը անհանգիստ կլինի և շատ գժուարութեամբ կկարողանայ միանդամից երկու խաչմերուկ ընկած պտուկներից կթել։ Բայց իսկապէս ուղղակի մօրից ծծելն ևո ունի իւր առաւելութիւնները։ Հորթը ստանում է չափազանց մաքուր և քնական տաքութեամբ կաթ։ Տէսց սորանով էլ բացատրւում է այն հանդամանքը, որ մօրը ծծող հորթերի մէջ մահուան դէպքեր աւելի սակաւ են տեղի ունենում, քան միւսների մէջ։ Աւելի զգալի է այդ բանը ծծելու առաջին երեք օրերում, որի պատճառով շատ կովատէրեր, դէպէտ հորթին չեն թոյլ տալիս մշտապէս ծծելու մօրը, բայց

այս ակվեի օրերի համար բացառութիւն են անում: Այսուամենայնիւ փորձերը ցոյց են տուել, որ մօրից հեռու խնամուած հորժերը կարող են շատ լաւ ապագայ խոռտանալ, եթէ արթուն հսկող լինի կաթի մաքութեան, տաքութեան, խնամելու կանոնաւորութեան վերայ:

Սկզբներում չպէտք է արհեստական կաթնամաններ (ՊՈԽԼԱԿԱ) գործածել, որովհետև այդպիսի ամանների պառուկները հեշտութեամբ են կեղաստուում և պատճառ դասնում փորլուծութեան և շատ տարափոխիկ հիւանդութիւնների: Առաջին անգամ աւելի յարմար և օգտակար է սովորեցնել հորթին կաթ ծծելու մատի վրայից, թերեւով հորթի գլուխը գէտի կաթով լի ամանը: Դուքա համար ձեռքի միջին մատը պէտք է դնել հորթի ըերանը, նա կսկսէ ծծել և ծծելիս ներս կքաշէ նաև կաթը. այդ ժամանակ մատը պէտք է քիչ դուրս քաշել և այդպիսով առաջնամարար սովորեցնել հորթին կաթ խմելու ուղղակի ամանց: Մինչև առաջին շաբաթուայ վերջը պէտք է աշխատել սովորեցնելու, որ հորթը առանց մէկի օգնութեան ամանց կաթ խմէ, դուրս քաշելով ըերանց ժամանակ առ ժամանակ մատը և դունչը սռնելով կաթի մէջ: Խըն ըստ ինքեան հառկանալի է, որ աէրը ամբողջ ժամանակը առանձին ուշը պէտք է գարձնէ մաքութեան վերայ\* ամանը պէտք է լաւ լուացած լինի. վաս չի լինի, եթէ ժամանակ առ ժամանակ ձեռները, կովի կուրծը լուացուին կը աջրով: Հորթին տուած կաթը բացի մաքուր լինելուց պէտք է ունենայ այսքան տաքութիւն, որքան տաքութիւն ունենում է մօր ստիճարի կաթը, այն է<sup>25—26</sup>: Այս նպատակին հասնելու համար երբէք խորհուրդ չեն տալիս կաթի վերայ տաք ջուր աւելացնել, որովհետև աւելորդ ջրի քանակութիւնը թուացնում է հորթի մարմնի կազմուածքը և անընդունակ դարձնում կուռելու հիւանդութիւնների դէմ\* մաքութիւննել նուազում է:

Ասովհետև նորաձինների ստամաքսը փոքը է լինում և թոյլ, գործ համար առաջին շաբաթուայ ընթացքում պէտք է շուտ շուտ կերակրել՝ օրական 5—7 անգամ, ազա միւս շաբաթներում առաջնամարար նուազեցնելով հասցնել մինչև 3 ան-

\* Հորերին կարով կերակրելու համար հնարել են զանազան զարժիքներ: Դոցանից մ.իր, օրինակ պ. Խաօսի հնարածը (Դիմուրկին խզակում) կովի սիրնի մի պատճենն է զբերէ: Նա ներկայացնում է կարով իի մի տամա: Ար վերջանում է զառապեցից պատրաստած պտուկները: Կարն այդ պտուկներից հոսում է միայն այս ժամանակ, եթ նարք սկսում է ծծել: Այդ զարժիքի գինը 7 րարի է: Կարելի է բերել տալ „Պարուսու“ ընկերութեան միջոցով:

գամի; Երկրորդ, Երրորդ և այլ շաբաթներում օրական այնքան անդամ պէտք է կաթ տալ, քանի անդամ որ կթում են կուկա ըին: Բայց նայած հանգամանքներին կարելի է նաև շեղուել այս կամունից: այսպէս, օրինակ, կարեք չկայ անպայման ամէն անդամ խմացնել հորթերին այն քանակութեամբ կաթ, որքան որու շուած է: Եթէ հորթը ինչ ինչ պատճառներից ստիպուած ախորժակ չունի և անկարող է որոշուած չափով կաթ խմել, չպէտք է ստիպել, հակառակ դէպքում կարող է մարսողութիւնը խանգարուել: Հորթերի փորձութութիւնը այնքան վնասակար է նոցա կեանքի զարդացման համար, որ ապագայում դժուար կլինի այլ ևս ուղղել: Փորձերից երեսել է, որ մի քանի անդամ վիրլուծութեան ենթակայ եղած հորթերից յառաջանում են համեմատաբար մանր անասուններ:

Եթէ հորթը սնւում է հեռու մօրից, պէտք է ուշադրութիւն դարձնել ամէն անդամ տրուելիք կաթի քանակութեան վերայ: Փորձը ցոյց է տուել, որ առաջին շաբաթուայ մէջ պէտք է այնքան կաթ տալ, որքան ծանրութիւն կունենայ նորա մարմինը նոր ծնուած ժամանակ: Այսպէս, օրինակ, առաջին անդամ պէտք է տալ միայն  $\frac{1}{4}$  լ վեգոր կաթ, իսկ յետոյ աստիճանաբար շատացնել: Զպէտք է մոռանալ, որ հորթի մարմնի աստիճանաբար զարդացումը և առողջութիւնը յաջող ընթացք կարող է ունենալ այն ժամանակ միայն, երբ կերի փոփոխութիւնը աստիճանաբար և մեծ զգուշութեամբ է տեղի ունենում: Մի քանի շաբաթներ անցնելուց յետոյ երես չքաշած կաթի քանակութիւնը պէտք է սակաւ առ տակաւ պակասի և ընդհակառակը, երես քաշածինը աստիճանաբար աւելանայ: Նոյն կերպ պէտք է վարուել նաև յետոյ ուրիշ կեր գործածելիս: Ընդհանրապէս կաթով կերակրելուց (16 շաբաթից) յետոյ, պէտք է աշխատել, որ նոր տեսակի կերը հարուստ լինի սպիտակուցով և ճարպով, որովհետև հորթի կազմուածքը այդ ժամանակին երում խիստ արագ է աճում, իսկ միևնույն ոսկոր կազմող նիւթը կերի սպիտակուցն է, և ճարպը կենդանու համար այնպիսի սննդաբար նիւթերիցն է, ինչպիսին են միւս մնացած ոչ բորակային նիւթերը, և գեռ  $2\frac{1}{2}$  անդամ զօրեղ: Թէպէտ հորթին կոշտ կերի՝ խոտի և այլ նիւթերի, պէտք է ոսկորեցնել ծնելուց 10—12 շաբաթ յետոյ, քայց գեռ մի ամսական հատակում շատերը խորհուրդ են տալիս փորձել դործ ածելու այդպիսի կեր, որովհետև այդ հասակից ի վեր հորթի ստամոքսը սկսում է քիչ քիչ զարդանալ և նորա մէջ որոճալու գրգիռ և ախորժակ երեան դալ: Միջակ հասակ ունեցող հորթերի համար պէտք է աչքի առաջ ունենալ կերի հետեւական աղիւսակը.

## ԵՐԵՒ ՀՎԱՅԱԾ.

Առաջին շաբաթում պէտք է տալ		
անպատճառ մօք կաթից 1)	23	կրուժկա
Երկրորդ «	»	32 « »
Երրորդ «	»	34 « »
Չորրորդ «	»	37 « »
Հինգերորդ «	»	40 « »
Վ. Եցերորդ «	»	42 1/2 « »

Արանից յետոյ պէտք է գործ  
ածել նաև

ԵՐԵՒ ՀՎԱՅԱԾ ԿԱԹ 2).

Եօթներորդ «	*	40	«	»	10 կրուժկա
Ութերորդ «	»	34	«	»	18 « »
Խններորդ «	»	25	«	»	28 « »
Տասներորդ «	»	16	«	»	40 « »
Տասնեմէկերորդ «	»	7	«	»	48 « »
Տասնեերկուերորդ «	»	»	«	»	55 « »
Տասնեերեքերորդ «	»	»	«	»	43 « »
Տասնեչորսերորդ «	»	»	«	»	30 « »
Տասնեհինգերորդ «	»	»	«	»	15 « »

Այսպիսով ուրեմն 16 շաբաթուայ ընթացքում հորթի համար իբրև սնունդ կարող է ծախսուել մօտաւորապէս 33 վեղրօ երես չքաշած և 28 վեղրօ քաշած կաթ:

Վ. Եց շաբաթական հորթին երես քաշած կաթի տեղ կարելի է տալ 10—12 կրուժկա թան, միայն հետեւեալ իւրաքանչիւր շաբաթուայ համար պէտք է տասնական կրուժկա աւելացնել: Երբ հորթը որոշ հասակի է հասնում, բայց կաթից պէտք է տալ նաև իբրև կեր, այսպէս, օրինակ, կաթի հետ քիչ տաք ջուր խառնել և ապա դորա վերայ աւելացնել քիչ քանակութեամբ ոչ շատ մանրած հատիկներ, ալիւրի, վուշի թեփ, դարու, վարսակի, հաճարի և կամ վուշի սերմերից պատրաստած ալիւր, մանրած հաց, որով կստացուի մի տեսակ լափ (ՊՈՅԼՈ): Այս ժամանակուանից ոկտած կարելի է գործ ածել նաև քիչ քանակութեամբ չոր և լաւ

1. 20 կրուժկան մի վեղրօ է, մի վեղրօ կարը 31 գրուանիայ է:

2. Խակապէս երես չհայած կարի այս աստիճան մեծ բանակուրեամբ ծախսելը բոլլատեհի է այն տեղերի համար, որտեղ կարի վեղրօն 50 կոպէկից քանզ չէ. բանգ եղած տեղերում պէտք է երես չհայած կարի բանակը պակասեցնել եւ աւելացնել երես բաշածից:

խոտ։ Խնդիրը լուս ինքեան հառկանալի է, որ երես չքաշած կաթի աստիճանաբար պակասելովը, աւելանում է երես քաշած կաթի և մի այլ յարմարաւոր կերի, օրինակ, ալիւրի քանակութիւնը Տառներորդ շաբաթից սկսած կարելի է աւելացնել նաև շենուկ, նաև և կրուժկա օրական և ապա մինչեւ 13-րդ շաբաթում հասցնել 6 կրուժկի։ Նիմուշի կարելի է գործ ածել մինչեւ 20-րդ շաբաթը, միայն շաբաթական պէտք է պակասեցնել մէկ մէկ կրուժկա, այնպէս որ 15 և 16 շաբաթներում միայն մի անգամ տալ և 18, 19-րդ շաբաթներում գարձեալ մի անգամ, և վերջ։ Տառներեք շաբաթական հորթին պէտք է շարունակել տալ երես քաշած կաթ։ միայն այս ժամանակից սկսում է պակասել նաև երես քաշած կաթի քանակը, այնպէս որ 16-րդ շաբաթուայ մէջ պէտք է բոլորովին գագարեցնել կաթի գործածութիւնը և փոխարէնը օրական մի անգամ աւելացնել մէկ գրղւանքայ չոր, մանրած, փշրած վարսակ։ Քսաններորդ շաբաթից, պայմանը հինգ ամսեց յետոյ հորթին ամենայն օր պէտք է տալ մինչեւ 12 գրուանքայ լաւ չոր խոտ և 4 գրուանքայ ալիւրից ու 2 գրուանքայ թեփից լափ, և նորանից յետոյ շարունակել կերաւ կրելը այնպէս, ինչպէս սովորաբար կերակրութեն մէծ եղջիւրաւոր անասուններին։ Նատ աեզերում 4—5 ամսական հորթին սովորեցնում են ուտել բացի ամենալաւ տէսակ չոր խոտեց և թխած հացից, նաև ոչ շատ մանրած վարսակից, հաճարի թեփից, վուշի սերմերի ալիւրից կազմած մի կեր, որի վերայ երբեմն աւելացնում են նաև բազուկ (ճակնդեղ) կամ մի այլ բանջար։ Հորթերին սովորեցնում են ուտել նաև ինչպէս վարսակի փշրանք (Ճրօնիա), նոյնպէս և գարու, հաճարի, եղիսկատացորենի, վուշի սերմեր, շաղգամ (քննա), կոպտոն։ Եթէ կարեւոր է համարելում չորս կամ հինգ ամսական հորթին արածելու ու դարելը, պէտք է նոցա յաճախ տալ նաև ոչ շատ մանրած վարսակից, ալիւրի և վուշի թեփից պատրաստած մի կեր՝ վերան նախօրօք աւելացնելով քեզ աղ։

Հորթերին երեկք չպէտք է ուտացնել վուշի կոպտոն մինչեւ որ նոցա չդառնան 16 շաբաթական։ այդ հասակից սկսած պէտք է ամէն մի հորթին նաև օրական 1/2 գրկ. և ապա աստիճանաբար շատացնելով մինչեւ մի տարեկան գառնալը հասցնել այդ չափը 5 գրուանքի։

Երբեք մնունգ ալիւրը և հատիկներից պատրաստած կերը պակաս նշանակութիւն ունին՝ մի քանիսը թանկութեան պատճառով, ինչպէս օրինակ, ցորենը, իսկ միւսները սակաւ օգտակարութեան պատճառով, որովհետեւ կարող են մաքսղութիւնը խանդարել, արեան վնասակար թանձրութիւն և այսուեղից եւ

ոտների անդամալուծութիւն յառաջացնել։ Վուշի սերմերը բացի նրանից որ երինջին հեշտ եղանակով և չնչին ժաւալով բաւականաչափ սննդաբար նիւթեր են մատակարարում, մի կարեռը նշանակութիւն ևս ունին. նոքա լրացնում են երինջի կերի մեջի ճարպի պակասութիւնը։ Այդ պակասութիւնը կերի մեջ յառաջացաւ նրանից, որ երես չքաշած կաթի տեղ սկսեցինը գործածել քաշածը։ Կերի մեջ ճարպի պակասութեան առաջը կոպտոն գործածելով չի կարելի առնել, որովհետեւ այդ վերջինը չի նպաստում կենդանու մարմնի աստիճանաբար զարգացմանը։ Վուշի աղանձած սերմերը թեթև լուծի ժամանակ շատ լաւ միջոց են մատաղ կենդանու ստամոքսի գործունէութիւնը կանոնաւորելու։

Փորձերը ցոյց են տուել, որ մի քանի տեսակ հատիկներից, ինչպէս, օրինակ, վարսակից, գարուց և հաճարից կաղմած խառն կերը աւելի լաւ ներգործութիւն է ունենում հորթի մարմնի զարգացման վերայ, քան մի տեսակից կաղմածը։ Եթէ անասնատէրն ունի բաւական չափով սիսեռ, ոսպ և այլ նոյնանման նիւթեր, պէտք է գործ ածել, միայն ամէն անդամ քիչ քանակութեամբ։ աւելի նպատակայարմար և օգտակար կլինի գործածել նոցա մանրած տեսակը լաւ խստից պատրաստած թէլի հետ, իսկ այս վերջինս պատրաստում են հետեւել կերպով։ Վեր են առնում լաւ չոր խոտ, վերան լցնում են եռացրած ջուր և թողնում 5—6 ժամ։ այդպիսով ստացւում է խոտի թէլ։ Այս թէլից մեծ քանակութեամբ չի կարելի գործ ածել, ամենաշատը օրական 6—8 կվարտ։ հակառակ գէպը ունի կենդանին կուկէ թուլանալ և նոքա որովայնը կախ կլնինի։

Հորթերին չոր խոտ կարելի է տալ նոյն իսկ նոցա կեանըի այն շրջանում, երբ գեռ կերակրուում են միմիայն երես չքաշած կաթով, որովհետեւ գէպ այդպիսի կերն ունեցած գրգիռը նոցա մեջ շատ վազ է երեան դալիս միայն այդ խոտը յատկութեամբ պէտք է լինի ամենալաւը, փափուկը և անուշահոտը և չպէտք է քակլայանման բոյսերից (բօօօօ՞ քաշած բառ) ստացուած լինի, որովհետեւ դոքա դժուարութեամբ են մարտում։ Այլ կերպ պէտք է վարուել կամաչ կերի հետ, որ քանակութեամբ շատ քիչ պէտք է լինի։ օրինակ՝ մանրած կարմիր աւուոյտը շատ օգտակար է, որովհետեւ վերջնիս հետ կերի մեջ մտնում է մեծ քանակութեամբ կեր, որ շատ կարեռը է ֆիզիքալէս աճող կենդանու համար։ Հենց այս նպատակով խորհուրդ են տալիս հորթերին տալ կերի վերայ ցանած կաւճի փոշի և կամ ուղղակի կտորներով դնել մոռւրքի մեջը, հակառակ գէպը մատաղ ստամպուում

կը պակասութեան և մեծ քանակութեամբ զանազան թթուներ յառաջանալու պատճառով հորթերի ոսկըները պակասաւոր կլինեն, հեշտութեամբ կկոտրտուեն, և զանազան հիւանդութիւններ կյառաջանան։ Ախորժակ բաց անելու և կերից զգալի օգուտներ ստանալու համար օգտակար է գործ ածել աղ, ամէն մի հորթին օրական մի մի մսիալ։ Այս վերոյիշեալ բոլոր խորհուրդները պէտք է գործադրել այն ժամանակ միայն, երբ հորթը ծնելուց յետոյ մօտ ախուռում մնում է միայն մի ժամ՝ չորանալու նպասակով։ Հակառակ դէպքում պէտք է փոխիսութիւններ մտցնել։

Երեմն հորթերի կաշուի վերայ կոշտ մազեր են դուրս գալիս. այդ նշան է, որ նոցա կերն անքաւարար է։ Երեկք կերի պակասութեան պատճառով չպէտք է կենդանու մարմնի զարգացմանը արդելք դառնալ, որովհետեւ այդ ժամանակ կենդանու հասակը խիստ մեծ քայլերով է առաջ գնում և հակառակ վարուելով այդ աճեցմանը, կենդանին կսկսէ նուազել, ցեղը կայլասեռուի։ Ընդհակառակն, երբ շօշափելիս կաշին սառափեկ կակուզ լինի, նոտատեղի բլրակներում ճարպային թմբիկներ երևան, այդ նշան է, որ հորթերը չափազանց առատ են կերակրում, որը, ի հարկէ, վնասակար է նոցա ապագայում տալիք կաթի առատութեան համար։

Հորթեր կերակրելիս ամենից աւելի կարեսը է ուշք դարձնել մաքրութեան վերայ, որովհետեւ գուցէ շատ հեշտութեամբ վիրլուծութիւն առաջ կդայ, որ խիստ վտանգաւոր կարող է լինել և մինչեւ անդամ պատճառ դառնալ վարակիչ, տորափոխիկ հիւանդութեան։ Հորթերին խմացնելուց յետոյ, մնացած կաթն այլ ևս չպէտք է գործ ածել միւս անդամ։ ամէն անդամ կաթնամանը պէտք է լուանալ տաքացրած ջրով։ Եթէ հորթը ստամոքսի խանդարմունք ունի, պէտք է տալ լաւ եփած, բայց քիչ սառած կաթ։ Եթէ այդ չօգնէ, պէտք է կաթի վերայ աւելացնել խորոված և սղկած, փշրած հաւի ձու, և կամ, ինչպէս վերեն էլ սաացինք, փոքր ինչ բոված վուշի սերմեր տալ։

Սմենայն օր հարկաւոր է հորթերի տակ ածել նոր և թարմ փոռուածք, որպէս զի նոքա թաց կամ խոնաւ աղբի վերայ չմընան։ Ակղըներում, մինչեւ երեք ամիս, հորթերին չպէտք է միասին պահել, անհրաժեշտ է ամէն մէկին առանձին առանձին տեղաւորել։ Հակառակ դէպքում նոքա կսկսեն իրար լիզել և կտւել կտան իրար մազեր, որոնք ստամոքսում խճճուելով և կոշտեր կազմելով, արդելք կդառնան մարսողութեանը։ Երեք ամիս անցնելուց յետոյ միայն կարելի է խնամել միասին։

Հոլլանդացիները առաջին երկու երեք ամիսները, ինչ եղանակ ուղղում է լինի, հորթերին գուրս չեն թողնում, այդքան ժամանակ անցնելուց յետոյ միայն գուրս են բերում և փակում ցանկապատ և առաջուց հնձած մի տեղ, որտեղ և կերակրում են: Հինգ ամսից յետոյ թէ ցերեկը և թէ գիշերը (ի հարկէ ամառը) հորթերին պահում են այդ ցանկապատ տեղերում: Արօտառ տեղերում արածելու թողնում են մի տարուց յետոյ միայն, ըստ հօտի մէջ երկու տարուց ոչ աւելի վաղ, մինչև երկու տարեկան դառնալը նոցա երինջը երեք ցուլի երես չի տեսնում:

Հորթերի կաշին պէտք է մաքրել համարեա ամենայն օր ծղոտէ լախտերով և կամ փափուկ չոր խոտի մինչով, որով նոցա շնչառութիւնը՝ կլաւանայ, դէմքը կզուաթանայ, կենդանին առողջ կլինի, ախորժակը կբացուի, աստիճանաբար իւր հասակը կառնէ, և կաշուի վերայից նոցա անհանգոտացնող ըռուի որդերը կոչնչանան: Անհամաժեշտ է նաև սկզբներում գոնէ շաբաթը մի անգամ լողացնել հորթերին գուլ ջրով: Անմաքուր ազգով ծածկուած հորթերը աւելի գժուաբութեամբ են աճում և ֆիզիքապէս զարգանում: Նատ անգամ հորթերի և այլ ընտանի անսառունների կաշուի վերայ մենք տեսնում ենք ուռուցքներ, գնտիկներ (Եց-գորք): Գոցա պատճառը բոռն է, որ իւր ձուերը գնում է կենացանու կաշուի մէջ, որտեղ նոքա թրթուըներ են դառնում և ուժաթափ անում կենդանուն: Սոցանից աղատուելու համար պէտք է այն անցքերում, որ թրթուըն է գտնւում, լցնել մի կաթիլ ընկեկն (ԸԿՊԱԴԱՐՔ) և կամ կաշին թեթև կերպով կարել ու այնտեղից մատներով գուրս մղել կենդանուն:

Հորթերից աղագայում ազնիւ ցեղի անսառուններ ստանալու համար աջըի առաջ պէտք է ունենալ հետեւեալ պայմանները,

1) Առուսաստանում, շատ անասնատէրեր նկատել են, որ սովորաբար աշխան ծնած հորթերից աւելի շատ կաթնոտ կովեր են ստացւում:

2) Առաջին ծնի և մասամբ էլ երկրորդ ծնի հորթերից աւելի թոյլ և ոչ այնքան ազնիւ տեսակի կովեր կստացուեն, քան 3-րդ, 4-րդ կամ 5-րդ ծներից:

3) Ամենակարեւոր հարցերից մէկն էլ այն է, թէ արդեօք որ հորթը պէտք է թողնել աղագայում ազնիւ և ընտիր ցեղի կով ստանալու համար: Այսպիսի գէպքում պէտք է ուշք դարձնել, թէ արդեօք նորա մայրը և տատը որպան կաթնոտ են եղել, թէ արդեօք որպան ընտիր ցեղից է եղել նորա-

հայթը, այսինքն վերջինս արգեօք կաթնուտ կովերից է յառաջացած, և այլն։ Առվերի կաթնուտութեան մասին խօսելիս բաւական չէ միայն ուշք դարձնել նորա տուած կաթի քանակութեան վերայ, այլ առաւելապէս այն բանի վերայ, թէ ի՞նչ քանակութեամբ և ի՞նչ յատկութիւն ունեցող կերից է ստացւում կաթի այս կամ այն քանակութիւնը։ Հորթի ծագման մասին տեղեկութիւններ հաւաքելիս օգտակար է ուշք դարձնել նոցա զիմաց կունութեան, տոկունութեան, ծնողների ունեցած պակասութիւնների, ախտերի վերայ՝ իրեւ առանձնայատկութիւնների, որոնք որոշ չափով կարող են ժառանգաբար անցնել մէկից միւսին։

4) Կարեոք է ուշք դարձնել նաև հորթի մարմանի ձևի վերայ։ Թէպէտ դժուար է պահանջել, որ հորթը նոյնպէս իւր համարի համեմատ խիստ խոր կուրծք և լայն մէջք ունենայ, ինչպէս երկու առքեկան լաւ երինջը, բայց աւելի լաւ պէտք է համարել այն հորթերը, որոնք իւրեանց հասակակիցների հետ համեմատած այդ վերսիշեալ և այլ ուրիշ բաների վերաբերմամբ որոշ չափով աշքի են ընկնում։ Յ—4 ամսական հորթի կուրծքի խորութիւնը բաւարար պէտք է համարել, եթէ ընի առջեկի մասի (անմիջապէս առաջին զյուղ ուների յետեւ կողմը) շրջապատը իւր երկարութիւնից՝ հաշուած թիակ ուկրի և ուսի յօդից մինչև նստատեղի դուրս ընկած սոկը՝ բլրակը (օֆ-  
=X ճալապահի նորոր), մի վերշոկ աւելի լինի։ Աւելի ուշք պէտք է դարձնել, որ կթի համար պահուած հորթը ունենայ բարակ լիմանը և բարակ ու ազատ ձգուող կաշի՝ ծածկուած բարակ, փայլուն մաղերով և միջակ երկարութեամբ դունչ։

5) Ամենակարեւոր պայմաններից մէկն էլ այն է, որ սերունդ յառաջացնելու համար պահուած հորթը անպայման առողջ լինի և լաւ ախտրժակ ունենայ։ Վատաղ կենդանին պէտք է բաւականաչափ շարժուն վիճակի մէջ գտնուի, որպէս զի, երբ կենդանին հանին իւր հասունութեան, ունենայ բաւականաչափ առողջութիւն, արեան զօրեզ շրջանառութիւն և դիմաց կուն զղեր։ Այս և այլ ուրիշ շատ սոյնանման պայմաններ անհրաժեշտ են կթի կովի համար, սըպէս զի առանց առողջութիւնը խանդաբառելու, առանց հիւանդանալու և առանց կորցնելու կանոնաւոր յղանալու և առողջ սերունդ յառաջացնելու ընդունակութիւնը՝ աճեցնէ ու շատացնէ իւր տուած կաթի քանակը ամենաբարձր աստիճանի։ Այսպիսի պայմաններում շատ օգտակար է կաթի համար պահուող մատաղ անպատճեների արօտներում արածելը՝ բայց թէ ո՞ր հասակից պէտք է թող-

Նել, այդ այնքան էլ որոշ չէ: Ոմանք ասում են, որ այդ պէտք  
է տեղի ունենայ նոցա կեանքի հետ առաջին գարնանը. սի քա-  
նիսն էլ խորհուրդ են տալիս թողնել երկրորդ գարնանը, իսկ  
առաջին գարնան համար ախոռների մօտ մի ցանկապատ շնչել,  
ու այնտեղ թողնել հորթերին ազատ շարժուելու: Այս երկրորդ  
տեսակ համոզմունք ունեցողները աչքի առաջ ունեն այն հան-  
գամանքը, որ չափազանց փոքր հորթերին արօտներում բաց  
թողնելիս՝ նոքա ստամոքսի խանգարմունք կստանան, որի պատ-  
ճառաւ և շատ թոյլ կերպով կաճեն, ու կմեծանան: Խսկապէս  
այս կերպ վնասներ յառաջանալու պատճառն այն է, որ չոր  
կերից կանաչի անցնելիս որոշ աստիճանաւորութիւն չի պահ-  
ուում:

Սկզբներում հորթերին պէտք է արածեցնել օրական միայն մի քանի ժամ, և սովորական կերը գեռ շարունակել տաք ախոռում։ Ջրելն ևս սկզբներում պէտք է տեղի ունենայ ախոռուում։ Արածելն խախալէս կարող է վնասակար լինել ուշ, ասդ իւ ամսի մէջ ծնած հորթերի համար։ Այդպիսիներին մինչեւ ամառուայ երկրոսդ կէսը լաւ կլինի պահել ախոռում, միայն ամէն անդամ կարելի է քեզ քանակութեամբ կանաչ կեր տալ։

Հորթերին կապելու մասին խօսք անդամ՝ չէ կարող լինել,  
նոքա պէտք է աղաս լինեն:

Խնչ վերաբերում է իրքեւ աշխատաւոր կամ մսացու սլա-  
հուող հորթելին, այսքանը պէտք է ասել, որ եթէ տնտեսական  
պայմանները ներում են, առաջիններին հարկաւոր է կերակրել  
աւելի առատ և աւելի երկար ժամանակ երես չքաշած կաթով,  
քան կթի համար պատրաստուող հորթերին։ Մսացու համարուող  
հորթերին պէտք է կերակրել երկար ժամանակ նոյնպէս երես  
չքաշած կաթով և ուրիշ լաւ նիւթերով։